№ 25 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 3 **1890** ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 3 № 25

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ր.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր ներքին գործերը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Համակրելի ձեռնարկութիւն. Արհեստաւորների վիճակի ընտրութիւնը. Բագուի գործերը. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ԳԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Շվեյցարիայից.

ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Մեր բոլոր հասարակաց հիմնարկութիւններում կատարվող գործերը, մեզ, հասարակութեան մեծամասնութեան համար՝ մութ, անհասկանալի, գաղտնի են մնում: Սովորական ժամանակ, տարիների ընթացքում, այդ տեսակ հաստատութիւններում ամեն բան գաղտնի է մնում, ամեն բան ծածկված է մնում թանձր քողով,—այց հէնց որ մօտենում է նոյն հաստատութիւնների պաշտօնատար անձանց վերընտրութեան ժամանակը, անմիջապէս ըստվում է ընտրողական ագիտացիան. և այն մարդիկ, որոնք իրար պաշտպանում էին, փոխադարձապէս իրար պահպանում էին, այժմ, գոյութեան կռիւի համար, ըստում են միմեանց մերկացնել, սկսում են այց տալ, հրապարակ հանել նոյն հաստատութեան մէջ կատարվող այն աններելի գործերը, որ տարիների ընթացքում իրանք համբերում էին, փոխադարձապէս իրար պաշտպանելով և ներողամտութեամբ վերաբերվելով դէպի իրանց համար յայտնի, իսկ հասարակութեան համար անյայտ գործերը:

Թիֆլիսի քաղաքային կրեդիտական ընկերութեան վարչութեան անդամների և նախագահի ընտրութեան ժամանակը մոտեցել է,—և ահա նոյն ընկերութեան ներկայացուցիչները սկսում են միմեանց երեսին կեղտ շպրտել, միմեանց մատնել, միմեանց երեսով տալ այն բոլոր գործերը, որոնք տարիների ընթացքում շատ լաւ յայտնի էին իրանց, բայց որոնց հրապարակ հանելը մինչև ընտրութիւնների րոպէն ձեռնտու չէր նրանցից ոչ մինին:

Մինչև ընտրութիւնների, ուրեմն մինչև ագիտացիա անելու անհրաժեշտութեան րոպէն՝ ամեն բան ծածուկ էր մնում, ծածկված էր մնում գաղտնիութեան անթափանցելի քողով....

Բայց ահա հասնում է ընտրութիւնների րոպէն,—և իշխան բէհբութեան ստանձնում է պրօկուրորի պաշտօնը իր նախկին ընկերակիցների դէմ, որոնց գործերը իրան էլ շատ լաւ յայտնի էին, բայց որոնց մասին նրան ձեռնտու էր մինչև այժմ լռել: Հիմա միայն բէհբութեան բարձրացնում է վարագոյրը և բացարձակապէս յայտնում է որ ընկերութեան վարիչների գործերը անթիւ անհամար են, որ նրանք պէտք է պատժվեն և որ ինքն մի քանի անգամ եղել է ընկերութեան փրկողը՝ նրան սպառնացող անանկութիւնից:

Ուրիշ կողմից ընկերութեան վարչութիւնը տարիների ընթացքում գիտէր, որ իշխան բէհբութեան ոչինչ իրաւունք չունէր ընկերութեան անդամ, վերադիտող մասնաժողովի անդամ, ո՞ւր մնաց նոյն մասնաժողովի նախագահ լինելու, քանի որ ոչինչ օրինական ցէնզ չունէր, բայց համբերում էր այդ գործը, քանի որ իշխան բէհբութեանի օգնութեան մէջ կարիք էր զգում,—և այժմ յանկարծ նոր է յիշում նոյն վարչութիւնը թէ բէհբութեան ցէնզ չունի, և այդ հիման վրա հեռացնում է նրան ընկերութեան անդամութիւնից և մասնաժողովի նախագահի պաշտօնից: Եւ գուցէ նոյն մասնաժողովի անդամների մէջ, որոնք վճռեցին հեռացնել բէհբութեանին, ուրիշներ էլ կան, որոնք ոչինչ ցէնզ չունեն,—սակայն տակաւին վարչութեան անդամները նրանց չեն հեռացնում, մինչև որ դժգոհութիւն չը ծագի իրանց և ցէնզ չունեցող անդամի մէջ....

Երկու կողմից սկսում են վերջապէս յայտնել ճշմարտութիւնը, մերկացնել գործումները: բէհբութեան խոստանում է մեզ մանրամասն մերկացումներ. ի հարկէ դա շատ հետաքրքրական և ուսանելի կը լինի:

Բայց այս ունենք, որ երբ իշխան բէհբութեան կը սկսի թափել բանկի բոլոր գործումները, նա չի մոռանայ յիշել, ի միջի այլոց, բանկի վարչութեան և այն գործումը, որ յայտնի շահեր աչքի առջև ունենալով՝ վարչութիւնը իրան բէհբութեանին տարիների ընթացքում համբերում էր վերադիտող մասնաժողովի անդամի և նախագահի պաշտօնում, չը նայելով որ ինքն ոչինչ ցէնզ չունէր:

Ահա այսպէս են մեր բոլոր հասարակաց հաստատութիւնների ներքին գործերը: Բոլոր գործումները խնամքով ծածկվում են հասարակութեան աչքից, մինչև որ փոխադարձ շահ կայ գործին մասնակից անձանց համար.... Բայց հէնց որ ընկերներից մէկին վտանգ է սպառնում նորից չը վերընտրվելու, հէնց որ հանդէս է գալիս անձնական գոյութեան համար կռիւը,—ամեն բան սկսում է մերկանալ, բոլոր ընկերները սկսում են միմեանց փոխադարձապէս մատնել, այն ընկերները, որոնք տարիների ընթացքում փոխադարձապէս պաշտպանում էին իրար և մեծ խնամքով ծածկում էին հասարակութեան աչքից իրանց շրջանում կատարվող անթիւ գործումները:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿՐԵԼԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Բագուի հասարակութեան մի քանի անդամները այս օրերս մի համակրելի գործ են սկսել, որը մանաւանդ այժմ, երբ խօլերայի դալու վտանգ կայ, բաւական օգնութիւն կարող է անել քաղաքի ազքատ ժողովրդին: Առաջ ենք բերում մեզ ուղարկած մի գրութիւնից մի քանի կէտեր պարզելու համար, թէ ինչումն է կայանում գործը:

«Մեք ներքոյ ստորագրեալքս՝ Բագուի առաջին-մասնաւոր բուժարանի վարչութիւնը մի կողմից՝ և Բագուի ընակիչներ՝ Եղիշէ քահանայ Գեղամեանց, Բաղդասարիվ Սարգսեանց, Յակոբ Խաչատրեանց, Աւագ Ղասաբեանց, Նիկողայոս Մալխասեանց և Սիմէոն Արզումեանց երկրորդ կողմից՝ միմեանց հետ հետեւեալ դաշինքը կապեցինք հետեւեալ պայմաններով:

«Առաջին՝ մեզանից երկրորդները պարտաւոր ենք վերոյիշեալ թուականից սկսեալ մի տարի ժամանակով վճարել բուժարանի վարչութեան մի հազար և երկու հարիւր ռուբլի նպաստ՝ վճարելով այդ գումարը իւրաքանչիւր քառամսեկում կանխիկ չորս հարիւրական ռուբլի:

«Երկրորդ՝ բուժարանի վարչութիւնը ի փոխարէն այդ նպաստին պարտաւոր է ձրիաբար բժշկել բուժարանը դիմող ամեն մի հայ աղքատ ընտանիքին, որոց թիւը հասնում է մինչև 500 տուն:—Այդ ընտանիքներից իւրաքանչիւրին տրվելիք [illegible] պէտք է լինեն աղքատ ընտանիքի անդամների անունները: Այդ անուններից բուժարանի վարչութիւնը, եթէ ուզում է, կարող է կազմել մի ցուցակ, որպէս զի այդպիսով հնար ունենայ բուժարանի հասարակաց հիմնարկութեանց մեծամասնութեան հաստատութեան, անհասկանալի, գաղտնի են մնում: Սովորական ժամանակ, տարիների ընթացքում, այդ տեսակ հաստատութիւններում ամեն բան գաղտնի է մնում, ամեն բան ծածկված է մնում թանձր քողով,—այց հէնց որ մօտենում է նոյն հաստատութիւնների պաշտօնատար անձանց վերընտրութեան ժամանակը, անմիջապէս ըստվում է ընտրողական ագիտացիան. և այն մարդիկ, որոնք իրար պաշտպանում էին, փոխադարձապէս իրար պահպանում էին, այժմ, գոյութեան կռիւի համար, ըստում են միմեանց մերկացնել, սկսում են այց տալ, հրապարակ հանել նոյն հաստատութեան մէջ կատարվող այն աններելի գործումները, որ տարիների ընթացքում իրանք համբերում էին, փոխադարձապէս իրար պաշտպանելով և ներողամտութեամբ վերաբերվելով դէպի իրանց համար յայտնի, իսկ հասարակութեան համար անյայտ գործումները:

Թիֆլիսի քաղաքային կրեդիտական ընկերութեան վարչութեան անդամների և նախագահի ընտրութեան ժամանակը մոտեցել է,—և ահա նոյն ընկերութեան ներկայացուցիչները սկսում են միմեանց երեսին կեղտ շպրտել, միմեանց մատնել, միմեանց երեսով տալ այն բոլոր գործումները, որոնք տարիների ընթացքում շատ լաւ յայտնի էին իրանց, բայց որոնց հրապարակ հանելը մինչև ընտրութիւնների րոպէն ձեռնտու չէր նրանցից ոչ մինին:

Մինչև ընտրութիւնների, ուրեմն մինչև ագիտացիա անելու անհրաժեշտութեան րոպէն՝ ամեն բան ծածուկ էր մնում, ծածկված էր մնում գաղտնիութեան անթափանցելի քողով....

Բայց ահա հասնում է ընտրութիւնների րոպէն,—և իշխան բէհբութեան ստանձնում է պրօկուրորի պաշտօնը իր նախկին ընկերակիցների դէմ, որոնց գործումները իրան էլ շատ լաւ յայտնի էին, բայց որոնց մասին նրան ձեռնտու էր մինչև այժմ լռել: Հիմա միայն բէհբութեան բարձրացնում է վարագոյրը և բացարձակապէս յայտնում է որ ընկերութեան վարիչների գործումները անթիւ անհամար են, որ նրանք պէտք է պատժվեն և որ ինքն մի քանի անգամ եղել է ընկերութեան փրկողը՝ նրան սպառնացող անանկութիւնից:

Ուրիշ կողմից ընկերութեան վարչութիւնը տարիների ընթացքում գիտէր, որ իշխան բէհբութեան ոչինչ իրաւունք չունէր ընկերութեան անդամ, վերադիտող մասնաժողովի անդամ, ո՞ւր մնաց նոյն մասնաժողովի նախագահ լինելու, քանի որ ոչինչ օրինական ցէնզ չունէր, բայց համբերում էր այդ գործը, քանի որ իշխան բէհբութեանի օգնութեան մէջ կարիք էր զգում,—և այժմ յանկարծ նոր է յիշում նոյն վարչութիւնը թէ բէհբութեան ցէնզ չունի, և այդ հիման վրա հեռացնում է նրան ընկերութեան անդամութիւնից և մասնաժողովի նախագահի պաշտօնից: Եւ գուցէ նոյն մասնաժողովի անդամների մէջ, որոնք վճռեցին հեռացնել բէհբութեանին, ուրիշներ էլ կան, որոնք ոչինչ ցէնզ չունեն,—սակայն տակաւին վարչութեան անդամները նրանց չեն հեռացնում, մինչև որ դժգոհութիւն չը ծագի իրանց և ցէնզ չունեցող անդամի մէջ....

Երկու կողմից սկսում են վերջապէս յայտնել ճշմարտութիւնը, մերկացնել գործումները: բէհբութեան խոստանում է մեզ մանրամասն մերկացումներ. ի հարկէ դա շատ հետաքրքրական և ուսանելի կը լինի:

Բայց այս ունենք, որ երբ իշխան բէհբութեան կը սկսի թափել բանկի բոլոր գործումները, նա չի մոռանայ յիշել, ի միջի այլոց, բանկի վարչութեան և այն գործումը, որ յայտնի շահեր աչքի առջև ունենալով՝ վարչութիւնը իրան բէհբութեանին տարիների ընթացքում համբերում էր վերադիտող մասնաժողովի անդամի և նախագահի պաշտօնում, չը նայելով որ ինքն ոչինչ ցէնզ չունէր:

Ահա այսպէս են մեր բոլոր հասարակաց հաստատութիւնների ներքին գործերը: Բոլոր գործումները խնամքով ծածկվում են հասարակութեան աչքից, մինչև որ փոխադարձ շահ կայ գործին մասնակից անձանց համար.... Բայց հէնց որ ընկերներից մէկին վտանգ է սպառնում նորից չը վերընտրվելու, հէնց որ հանդէս է գալիս անձնական գոյութեան համար կռիւը,—ամեն բան սկսում է մերկանալ, բոլոր ընկերները սկսում են միմեանց փոխադարձապէս մատնել, այն ընկերները, որոնք տարիների ընթացքում փոխադարձապէս պաշտպանում էին իրար և մեծ խնամքով ծածկում էին հասարակութեան աչքից իրանց շրջանում կատարվող անթիւ գործումները:

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՇՎԷՅՑԱՐԻԱՑԻՑ

Շվէյցարիայի և մասնաւորապէս Ժընէվի համալսարանը.—Ուսանողուհիները.—Իգական սեռի կրթութիւնը.—Հայ ուսանողուհիների թիւը ինչու չէ աւելանում:

Ժընէվի համալսարանը, ինչպէս և Շվէյցարիայի գրեթէ բոլոր համալսարանները, չէ կարող համարվել ընդհանրապէս նշանաւոր, մինչև իսկ լաւ: Եւ այս այն հասկանալի պատճառով, որ նա չունի նշանաւոր, յայտնի, գիտուն ուսուցչապետներ: Մի որ և է համալսարան համարվում է նշանաւոր, ի հարկէ, ոչ թէ այն պատճառով որ նա ունի լաւ, գեղեցիկ շինութիւն,—այդ կողմից Ժընէվը կարող է պարծենալ—այլ որ նա ունի նշանաւոր, գիտուն դասախօսներ, ուսուցչապետներ. իսկ փոքրիկ Շվէյցարիան զուրկ է սրանցից՝ շատ քիչ բացառութեամբ: Այլապէ՞ս էլ անկարող է լինել, քանի որ այս բուռչափ երկիրը ունի չորս համալսարան՝ Ժընէվում, Ցիւրիխում, Բէռնում և Բազէլում, երկու ակադէմիա՝ Լօզանում և Նէօշատէլում (Neuchâtel) և մի պօլիտէխնիական ուսումնարան Ցիւրիխում: Լաւ համալսարաններ ունենալու համար, պէտք է ունենալ և լաւ նիւթական միջոց, որից զուրկ են Շվէյցարիայի քաղաքացիները: Ժընէվի կանտօնն ունի յիսուն միլիօն (50 միլիօն) ֆրանկ պարտք, էլ ո՞րտեղից կարող է ունենալ նա և լաւ համալսարան...

Շվէյցարացիները այժմ սկսել են ուշադրութիւն դարձնել համալսարանների անմխիթար դրութիւնը բարւոքելու վրա: Այս մասին երկու կարծիք կայ.—ոմանք առաջարկում են փակել համալսարաններից երկուսը ու ակադէմիաները և թողնել մէկը ֆրանսիական Շվէյցարիայում, իսկ միւսը՝ գերմանականում, որով և հեշտ կը լինի մատակարարել համալսարաններին նիւթական լաւ միջոց, որով և նա կունենայ լաւ, նշանաւոր և գիտուն ուսուցչապետներ, դասախօսներ: Իսկ որովհետև այս կարող է անախորժութիւն պատճառել այն կանտօններին, որոնք պէտք է զրկվեն համալսարաններից, հետևապէս և նիւթական օգտից, որ ստանում էր քաղաքը ուսանողներից և այլն, ուստի ոմանք առաջարկում են համալսարանները բաժան-բաժան անել. այսինքն ամեն մի քաղաք ունենայ մի ֆակուլտէտ, որով և հեշտ կը լինի քաղաքին կամ կանտօնին հայթայթել նրա նիւթական միջոցները և հրաւիրել նշանաւոր դասախօսներ: Այսպէս օրինակ՝ Ժընէվում ունենալ բժշկական, հետևապէս և բնագիտական ֆակուլտէտ, Լօզանում՝ իրաւաբանական, Նէօշատէլում՝ գրականը, և այլն:

Ինքն ըստ ինքեան խնդիրը նշանաւոր և հետաքրքիր է. բայց թէ երբ իրականութիւն կը ստանայ, երբ կը վճռվի, առ այժմ դրական ոչինչ չէ կարելի ասել, որովհետև սրա մասին խօսվում է մասնաւորապէս, այսպէս ասած՝ ընտանեկան շրջաններում: Խնդիրը հասարակական բնաւորութիւն չէ ստացել և մամուլն էլ դեռ չէ զբաղվում սրանով, թէև նորերումս տեղական թերթերը մի քանի յօդուածներ նուիրեցին Ժընէվի գրական ֆակուլտէտին, ակնարկելով որ մի—երկու ուսուցչապետներ այդ ֆակուլտէտը մենավաճառ, մնոնոպոլիա են արել: Իսկ թէ երբ և իցէ այս խնդիրը հասարակական բնաւորութիւն կառնի և լուրջ կերպարանք կը ստանայ և տաք վիճաբանութեան տեղիք կը տայ, կասկածել չէ կարելի, քանի որ վաղուց է նկատված համալսարանների աննախանձելի, անմխիթար դրութիւնը, քանի որ նրանք չեն կանգնած իրանց կոչման բարձրութեան վրա:

Ժընէվի համալսարանն ունի հետևեալ բաժանմունքները կամ ֆակուլտէտները.—բժշկական, տատմաբուժական բաժնով, բնագիտական և մաթեմատիական, իրաւաբանական, աստուածաբանական և գրական, որը ունի և մի առանձին ճիւղ՝ հասարակական գիտութիւնների (sciences sociales): Վերջինս բոլորովին նոր է և դեռ, այսպէս ասած, քաղաքացիական իրաւունք չէ ստացել, ուստի և համարվում է գրականի մի ճիւղը կամ բաժինը: Այս բաժնի ուսանողները համարվում են գրականին պատկանող, թէև նա տալիս է «Հասարակական գիտութիւնների» դիպլոմ: Այս ֆակուլտէտը բոլորովին նոր լինելով, աւելորդ չենք համարում ծանօթացնել ընթերցողներին և ընդհանուր գաղափար տալ դրա մասին: Նախ պէտք է ասենք՝ որ այս տեսակ ֆակուլտէտ կայ միայն Պարիզում, որը անհամեմատ լաւ և բարձր է այստեղինից և որը հիմնված է մասնաւոր անձերի ձեռնարկութեամբ: Այս տեսակ ֆակուլտէտ առ այժմ ոչ մի համալսարան և ոչ մի երկիր չունի, եթէ չենք սխալվում: Ֆակուլտէտի անունը պարզապէս որոշում է և նրա բնաւորութիւնը. նա ուսումնասիրում է բուն հասարակական գիտութիւնները, որոնցից մի քանիսը բոլորովին նոր են և մինչև իսկ դեռ գիտութիւն էլ չեն համարվում: Բայց թէ այդ նոր գիտութիւններն ունեն իրանց ապագան, որ նրանք ապագայում նշանաւոր դեր պէտք է խաղան հասարակական, ընկերական կեանքի կազմակերպութեան մէջ, արդէն այդ ինքն, գիտութեան ուսումնասիրելի նիւթը, խնդիրը, առարկան ցոյց է տալիս: Ահա այն առարկաները, որոնց ուսումնասիրում է այդ ֆակուլտէտը,—փիլիսոփայութեան պատմութիւն, ընդհանուր պատմութիւն, պատմութեան փիլիսոփայութիւն, քաղաքակրթութեան պատմութիւն, քաղաքատնտեսութիւն, սոցիօլոգիա և քաղաքական սիստեմներ (sistémes politiques). հասարակական սիստեմների ուսումն (étude des sistémes sociaux), համեմատական օրէնսդրութիւն (legislation comparée), կրօնների պատմութիւն, բանասիրութիւն (philologie), հնախօսութիւն կամ հնագիտութիւն (archéologie). սրանք ուսանողների համար պարտաւորեցուցիչ են: Պարտաւորեցուցիչ չեն,—փիլիսոփայութիւն, հասարակական խնդիրներ (qestions կամ sciences sociales), ստատիստիկա, ֆինանս, արձանագրութիւն և հնագրութիւն (épigraphie et paliographie) և լեզուագիտութիւն (linguistique). Պէտք է նկատել որ այս բաժինը շատ էլ աջող կերպով չէ կազմված: Թէ ֆակուլտէտի նորութիւնը և թէ ուսուցչապետների վատ, մինչև իսկ մի քանիսի անտանելի լինելն է պատճառ, որ ֆակուլտէտը բաւականաչափ ունկնդիրներ կամ ուսանողներ չունի, ինչպէս բնագիտականը: Մենք չենք համեմատում բժշկականի և իրաւաբանականի հետ, որովհետև նրանք բազմաթիւ կամ բաւականաչափ ուսանողներ ունեն և կունենան, որքան էլ վատ լինեն դասախօսները, քանի որ շատերը այժմեան երիտասարդներից կարիէրիստներ են, իսկ այդ ֆակուլտէտները հեշտ միջոց են տալիս լաւ-լաւ, չաղ-չաղ պաշտօններ, ասպարէզ, ձեռք բերել, մինչդեռ «Հասարակական գիտութիւնները» այդ բախտը չունեն....

Ինչպէս վերևում նկատեցինք, Ժընէվի համալսարանը չէ կարող համարվել ընդհանրապէս լաւ՝ չնորհիւ վատ ուսուցչապետների, որոնցով նա հարուստ է: Բացառութիւն է կազմում բնագիտականը, չնորհիւ երկու նշանաւոր գիտնական ուսուցչապետների՝ Ֆօխտի և Գրէբէի: Այս տարի նշանաւոր գիտնական Ֆօխտի փոխարէն, տկարութեան պատճառով, դասախօսում է առ ժամանակ նրա աշակերտ ուսուցչապետ Իւնգը՝ որը և նրա օգնականն է: Բժշկական ֆակուլտէտի ուսուցչապետներն էլ ընդհանրապէս յայտնի են: Բայց սա էլ է կաղում և այն պատճառով, որ հիւանդներ, հիւանդութիւններ և դիակներ չը կան

ժարանը դիմող հիւանդների անձնաւորութիւնը ստուգել։

«Երրորդ՝ վերոյիշեալ 500 տոմսակները պէտք է ունենան №№ և վաւերացրած լինեն բուժարանի տեսչի և Եղիշէ քահ. Գեղամեանցի ստորագրութիւններով ու կնիքներով՝ և պահվեն նոյն քահանայի և նրա ընկերների մօտ, որոնք ամեն անգամ տալիս են այն աղքատներին, որոց աղքատութիւնը ստուգել են։

«Չորրորդ՝ տոմսակներ ստացող ամեն մի աղքատ ընտանիք պարտաւոր է մինչև մի տարին լրանալը անկորուստ պահել իր տոմսակը։ Իսկ եթէ փչացրեց կամ կորցրեց, նոր տոմսակ չէ կարող ստանալ։ Այդ մասին բացառութիւն կարող է լինել ամենայարգելի դէպքերում։

«Հինգերորդ՝ տոմսակների ճակատներին դրված են «Աղքատ» և «Զքաւոր» բառերը։ Առաջին տեսակի տոմսակ ստացողները իրաւունք ունեն Զիշկովսկու (համաձայն նրա հետ եղած գրաւոր պայմանի) դեղատնից դեղեր ստանալ 50% զիջումով, իսկ երկրորդ տեսակի տոմսակ ստացողները,—բոլորովին ձրի։ Բուժարան դիմող ամեն մի հիւանդ պարտական է ներկայացնել հերթապահ բժշկին իր տոմսակը, իսկ բժիշկը հիւանդին դեղ գրելիս՝ պարտաւոր է դեղատոմսի վրա մակագրել վերոյիշեալ «Աղքատ» և «Զքաւոր» բառերից մինը կամ միւսը, նայելով իրան ներկայացած տոմսակին։

«Եօթներորդ՝ բուժարանի բժիշկների թւում պէտք է լինի անպատճառ և մի կին բժիշկ։

«Իններորդ՝ եթէ հայ աղքատներից եղան այնպիսիք, որոց հիւանդութիւնը չէ ներում նրանց տնից դուրս գալ՝ բուժարանի բժիշկները բարոյական պարտաւորութիւն են ստանձնում իրանց վրա այցելել այդպիսիներին նրանց տներում առանց որ և է վարձի։ Միայն Եղիշէ քահ. Գեղամեանց իր ընկերներով՝ պարտական է այդ դէպքում վճարել բժշկի կառքի ծախքերը, որոց ստացման եղանակը որոշվում է փոխադարձ համաձայնութեամբ։»

Եթէ այդ բոլորը ճշդութեամբ գործադրվի, եթէ բժիշկները ազնիւ կերպով վերաբերվեն դէպի իրանց այդ գործը, անկասկած աղքատները մեծ օգնութիւն ստացած կը լինեն։ Մնում է միայն ցանկանալ, որ զոնէ Բագուի բարեգործական հիմնարկութիւնները օգնեն այդ աղքատ ընտանիքներին մատակարարելու հարկաւոր դէպքում չորեր, կերակուր և այլն, որովհետև բժշկական գիտութիւնը ցոյց է տալիս, որ միայն գեղերով չէ կարելի հիւանդներ բժշկել։ Եթէ մինչև անդամ մի փոքրիկ ընակարան վարձվի, աղքատներին իրանց ժամանակ այնտեղ պահելու և բժշկելու համար, այն ժամանակ Բագուի հասարակութիւնը մի օրինակելի և միանգամայն գովելի գործ արած կը լինի։

***

ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐԻ ԳԼԽԱՒՈՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Զորեքշաբթի, փետրվարի 28-ին, Թիֆլիսի արհեստաւորաց վարչութեան դահլիճում կայացաւ արհեստաւորների գլխաւորի ընտրութիւնը։ Արհեստաւորների գլխաւոր ընտրվեց դարձեալ պ. Նաումէնկո, որը ինն տարի շարունակ վարում էր այդ պաշտօնը, իսկ նրա կանդիդատ ընտրվեց պ. Կարապետ Սերովբեանց։ Բոլոր ընտրելիները, որոնք պէտք է քուէարկվէին արհեստաւորների գլխաւորի պաշտօնի համար, չորս հոգի էին. պ. Նաումէնկո, որը ստացաւ 126 ձայն 53 ձայնի դէմ, Կարապետ Սերովբեանց՝ 113 ձայն 66-ի դէմ, Կոնիեվ՝ 110 ձայն 69-ի դէմ, և վրացի գըդատ կարող Կովալով՝ 63 ձայն 116-ի դէմ։ Պ. Կարապետ Սերովբեանցի 113 ձայնով կանդիդատ ընտրվելը մի հրաշք պէտք է համարել, աչքի առջև ունենալով այն տարօրինակ խարդախութիւնները, որ գործ դրեց պ. Նաումէնկոի կուսակցութիւնը ընտրութիւններից առաջ և որ գործ դրեցին ընտրութեան ժամանակ վարչութեան մէջ ծառայողները։ Ընտրողները, որոնք անգրագէտ էին, իրանց հետ տարել էին թղթի կտորներ, որոնց վրա գրած էին իրանց ցանկացած կանդիդատի անունը, բայց վարչութեան մէջ ծառայողները նրանց ձեռքից այդ թղթի կտորները առնելով, պատռտում ու դէն էին գըցում, իսկ նրանց փոխարէն տալիս էին արդէն վաղօրօք տպված թղթի կտորներ։ Այդ թղթի կտորների վրա վարչութեան մէջ ծառայողները գրում էին պ. Նաումէնկոի անունը և այնպէս բաժանում անգրագէտ ընտրողներին, որոնց և ընտրողները անգիտակցաբար ներկայացնում էին նախագահին։ Թուրք արհեստաւոր ընտրողները, փոխանակ «Կարապետ Սերովբեանց», արևելեան սովորութեամբ թղթի կտորների վրա գրել էին միայն «Կարապետ», բայց նրանց թղթերը չընդունվեցան բոլորովին, համարվելով անօրէն ընտրողական քուէներ։ Պ. Նաումէնկոի քուէատուփի վրա մնացել էին 19 հատ սև քուէներ, որոնց նահանգական վարչութեան կողմից այդտեղ ներկայ գտնվող առանձին յանձնարարութեան պաշտօնեայ պ. Օրլովսկի փոխարինեց սպիտակ քուէների։ Ընտրութեան մասնակցելու համար վարչութեան կողմից հրաւիրագրեր էին ուղարկված միայն այն անձանց, որոնք պատկանում էին պ. Նաումէնկոի կուսակցութեան, իսկ այն մարդիկ, որոնք իրաւունք ունէին մասնակցելու ընտրութեան մէջ, չը ստացան հրաւիրագրեր և այդպիսով չը կարողացան օգտվել իրանց իրաւունքից։

Ահա այս բոլոր հանգամանքները աչքի առջև ունենալով, արհեստաւորները պատրաստվում են մի խնդրագրով դիմել Թիֆլիսի պ. նահանգապետին, որ չը վաւերացվի պ. Նաումէնկոի ընտրութիւնը և նորից կրկնաքուէարկութիւն նշանակվի։

ԲԱԳՈՒԻ ԳՈՐԾԵՐԸ

Պարսկաստանի հետ գրեթէ ամեն օր հաղորդակցութիւն ունեցող Բագուն, նորանոր լուրեր է ստանում խալերայի արած կոտորածների առիթով Պարսկաստանում։ Ասում են թէ պարսիկների գործադրած միջոցները ապարդիւն են անցնում նախ այն պատճառով, որ պարսիկները չեն տեսնում իրանց թշնամուն և երկրորդ, որ չը գիտեն թէ սովորական զէնքով պէտք է կռուեն՝ թէ կայ մի այլ զէնք անհերոյթ թշնամու դէմ պատերազմելու համար։ Եւ ահա այս անորոշ դրութեան մէջ մնալով, պարսիկները դեռ զոհեր են տալիս։ Այսպիսի անհանգստացնող լուրերը բագուցիներին մտածել են տալիս։ Բայց եթէ բանը մնայ մեր քաղաքացիների մտածելուն, յիշեալ թշնամին գուցէ շուտով մեզ էլ այցելի։ Մեր քաղաքային վարչութիւնը, լաւ իմանալով, որ Բագուի ժողովրդի մեծամասնութիւն կազմող թուրքերը այնքան հասկացողութիւն ունեն մաքրապահութեան վրա, որքան և խալերայի վրա, ձեռնարկել է քաղաքը բաժանել 14 մասերի և իւրաքանչիւրը նրանցից շուտով պիտի յանձնվի առանձին առանձին յանձնախմբի վերահսկողութեանը։

Այժմ մի բան մեզ աւելի է մտածել տալիս. դա այն է, որ յիշեալ յանձնախմբերը իրանք կարող պիտի լինեն արդեօք ման դալ փողոցներում մարտի 9-ին—Թիւրքաց Նովրուզ բայրամի օրը, երբ ամեն մի թուրքի տանը մորթված ոչխարի արիւնի ու փողոցներում կուտակված փորոտիքի գարշահոտութիւն է տարածված լինում։ Այդ իսկապէս մի դժուար լուծելի խնդիր է։ Հետաքրքիր է իմանալ, ժամանակին պաշտօնապէս կը յայտարարվի թէ այստեղ և թէ ուրիշ քաղաքներում թուրքերին այս բանում նախազգուշացնելու համար, թէ չէ։ Բայց եթէ այդ նախազգուշութիւնը լինի, առաջին օրինակը պիտի մարենք գոնէ Բագուում։ Նոյնքան ևս հետաքիր է իմանալ՝ վերոյիշեալ պատրաստութիւնները շարքում մտածում են արդեօք՝ գոնէ այս տարվանից Բագուի փողոցները ջրել ծովի առատ ջրով։

Դրա համար մեր քաղաքը ունի մի շատ յարմարութիւն, որ համարեա ոչինչ ծախս չի նստի քաղաքին, այն է, որ քաղաքապատկան բաշէջների թէ սայլերը, թէ ձիաները, թէ ջրհանները և թէ ծառայողները համարեա թէ ամենայն օր ջրերով պարապ նստած են, բայց մեր ամենաջարկածով գոնէ մի բան արած կը լինեն։ Այնպիսի իմանալ, որ փողոցներ ջրելը 8 ամիս տևող ամառնային փոշու մէջ կորած Բագուի համար անհրաժեշտ կարևորութիւն է կազմում։ Ինչպէս՝ փոշին մեծամեծ վնասներ պատճառելիս է, Բագուն աշքացաւի կենտրոն է կազմում, որը առաջ է բերում և կոյրերի մի նշանակալի պրոցէնտ իւրաքանչիւր տարի։

Թէ փոշին, թէ ժողովրդի վատ կացութիւնը, թէ Բագուի անտանելի կլիման, թէ տաքուղջ ջուրը և թէ ամառվայ սարսափելի թը, առաջացնում են վարակիչ հիւանդութիւններ, որոնց հետևանքը լինում է մեռնողների արտասովոր քանակութիւն։

Որպէս քիչ առաջ ասեցինք, Բագուն խմելու ջրից զուրկ է։ Այդ մասին անցեալ տարի «Մշակի» № 120-ի մէջ յայտնել էինք, թէ մարդիր են ջուրը բերել Շամախու գաւառից, բայց սկսած գործը կրկին մնաց անկատար։

Այդպիսի հարցերը սովորաբար մեզանում ճռվում և իրագործվում են մտածելուց և ծրագիր կազմելուց մի քանի տարի յետոյ։ Երևի էլ ունի իր նպատակը։

Բագուում առաջնակարգ հարցերի թւում քաղաքային դումայի ձայնաւորների ու քաղաքային վարչութեան անդամների ընտրութեան հարցը, որը շուտով պիտի կատարվի։ Այդ մասին շարունակ լսվում է հետևեալը՝—«տեսնես ում են ընտրելու։»

Բագուի թուրքերի յետադիմութեան և մոլեռանդութեան մասին դաղափար կազմելու համար, առաջ ենք բերում հետևեալ իրողութիւնը։ Տեղիս նշանաւոր բարեգործ, այսպէս ասած, լուսաւոր հայեացքների տէր մի թուրք, որ կանալով որ տասնեակ մզկիթների թւում մի և մէկ հատիկ ուսումնարան թուրքերի համար, չը գիտէ իր բարոյական պարտքը, չէ հասկանում մարդու հոգեկան պահանջները, նրա բարոյական արժանիքն ու վսեմութիւնը։ Տգէտը գիտէ միայն՝ ուտել, խմել և քնել... ահա նրա կեանքի մի ակ պահանջը և նպատակը, նրա բարոյական փիլիսոփայութիւնը... Տգէտը գիտէ այն գիտէ անել այն, ինչ որ տեսել է, և այն, ինչ որ լսել է,—լինի վատ թէ լաւ, այդ և նոյն է, որովհետև նա անկարող է որոշել։ Զուրկ է ինքնուրոյն մտածելուց, դատելուց, քննելուց, նա ապրում է ուրիշի աշխարհում, անհատական աշխարհը չունի... «Հայրս կամ դաս այսպէս է անում, ուրեմն այսպէս է հարկաւոր, ես էլ այսպէս պիտի անեմ», այս է նրա տրամաբանութիւնը, այս է նրա աշխարհը, նրա խելքի ու մտքի հորիզոնը և սրանից աւելի առաջ նա անկարող է գնալ, այդ շրջանից կարող աւելի լաւ է ասել՝ շրջանակից նա չէ կարող դուրս գալ։ Աւելիի կամ նորի պահանջը նա չունի զգում. նա բաւականանում է նրանով, ինչ որ կայ։ Վաճառականի համար՝ արշինը և խարեբայութիւնը, վաշխառուի համար՝ խեղճին և թշուառին կեղեքելը, ծեծելը և մաշկելը, իսկ խեղճի և թշուառի համար՝ կեղեքվելը և խաբվելը և այլն.... Ո՞րից և ինչու համար են երկար ժամանակ մնում մի որ և է հասարակութեան մէջ այն զարգացման և անբարոյական հասկացողութիւնները, սովորութիւնները, և բազմազան ախտերը, ինչու հալածվում մարդկութեան վսեմ դաղափարները, նրա առաքելները, որոնք այսօր մարտիրոսներ են հանդիսանում... Ինչի հետևանքն են սրանք,—տգիտութեան, որը կաշկանդել, կուրացրել և սարսափելի դարձրել է այդ մարդկանց, որոնց անընդունակ է դարձրել մտածելու և հասկանալու որ՝ այս այսպէս չը պէտք է լինի, որովհետև սա անբարոյական վնասակար, փչացնող, մեռցնող է...

Ժընէվ. Ց. Դաւթեան

ուսանողների գործնական ուսումնասիրութեան համար, իսկ սա բժշկականութեան համար նշանակութիւն ունի։ Այնպիսի տարիներ են պատահում և այն էլ յաճախ, որ մի դիակը բաժին-բաժին անելուց յետոյ, դարձեալ մի քանի ուսանողներ մնում են առանց դիակամասնի։ Բայց այս տարի, շնորհիւ ինֆլուէնցիայի, ոչ միայն իւրաքանչիւր ուսանող ունի մի ամբողջ դիակ, այլ և աւելորդներ էլ կան....

—

Բայց չը նայած համալսարանի վատութեան, Ժընէվի ուսանողների թիւը տարուց տարի աւելանում է, մանաւանդ ուսանողուհիներով. այդ երևոյթի պատճառը հեշտ հասկանալի է։ Ուսանողական անուանացուցակից իմանում ենք, որ համալսարանը այս տարի ունի 554 ուսանող և 93 ուսանողուհի։ Թէև պաշտօնական անուանացուցակում կայ միայն 93 ուսանողուհու անուն, բայց իսկապէս պէտք է հաշուել մօտաւորապէս 100—105 և այս այն պատճառով, որ չքաւորները անկարող լինելով ժամանակին ուսման վարձը վճարել՝ չեն սորագրվել, ուստի և նրանց անունները էլ չեն տպագրված։ Սրանցից 43 գրական և «հասարակական գիտութիւնների» բաժնում են, 33 բժշկականում և տատմաբուժական բաժնում, և 17 ընագիտականում։ Ուսանողուհիների թիւը այս տարի զրեթէ կրկնակի աւելացել է և յոյս կայ, որ տարուց տարի կաւելանայ։ Ո՛վ գիտէ, կարող է գալ մի ժամանակ, որ շատ հաւանական է, Ժընէվի համալսարանում թւով աւելի ուսանողուհիներ կը լինեն, քան ուսանողներ.... Այս երևոյթը, ուսանողուհիների բազմանալը, խիստ մխիթարական է և միանգամայն ցանկալի։

Այս տարի, ինչպէս և միշտ, իրանց թւով աչքի են ընկնում հրէուհիները. վերջիններս այս տարի գրեթէ եռապատկվել են։ Այս արշաւանքը սրանց կողմից մենք չը գիտէինք ինչ երևոյթի վերագրել։ Դիմեցինք լեհացի մի բանւոր աղատ ունկնդիր ուսանողի, որը լակոնական ոճով պատասխանեց՝ «մենք պարտական ենք մեր մամուլին»։ Այո, լեհացիները պարտական են իրանց մամուլին, իսկ մենք ում ենք պարտական, որ հայ ուսանողուհու սով է, կատարեալ սով։ Այս տարի մերոնց թիւը միայն մէկով աւելացաւ։ Է՛հ, մէկն էլ թիւ է։ Երևի մենք էլ ենք պարտական մեր մամուլին, որ այս տարի միայն մէկն է եկել Եւրոպա բարձրագոյն ուսումն ստանալու... Սրա մասին յետոյ։ Բուլգարացիները որ չունէին ոչ մի այս տարի ունեցան երկու։

Ուսանողուհիները անցեալ տարի հիմնել են ընդհանուր ուսանողուհական մի ընկերութիւն, որի նպատակն է՝ արծարծել բարձրագոյն ուսման դաղափարը իգական սեռի մէջ և իր ոյժերի համեմատ նիւթապէս օգնել այն չքաւոր տիկիններին և օրիորդներին, որոնք բարձր ուսում ստանալ են ցանկանում։ Ընկերութիւնը ամենայն պատրաստականութեամբ տալիս է իրան դիմողներին տեղեկութիւններ համալսարանների վերաբերմամբ և ամենայն կերպ օգնում է նորեկներին մինչև ընտելանալը քաղաքին և այլն, առանձնապէս ֆրանսերէն չը հասկացողներին։ Ընկերութեան դիմում են հետևեալ հասցէով՝ A la présidente de la société des étudiantes de l'Université, Genéve (Suisse). Նամակներ ընդունվում են բոլոր լեզուներով։ Ցանկացողները կարող են դիմել և հայ ուսանողներին։

Ուսանողներն էլ բացի այլ և այլ մասնաւոր ուսանողական ընկերութիւններից, կօրպորացիաներից, ունեն և ընդհանուր մի ընկերութիւն, որի նպատակն է, լաւ լսեցէք, պաշտօնապէս մասնակցել այլ նայլ տօներին, օրինակ՝ մի որ և է պրոֆէսորի յոբելեանը տօնելուն, էլ ուրիշ ոչինչ, ոչ աւել և ոչ պակաս։ Ցեսնում էք որ ուսանողներս աւելի լուրջ, խելացի ենք, քան թէ ուսանողուհիները։ Վերջիններս ևս անդամ են այս ուսանողութեան, որոնց անդամակցելը ըստ կարգում դժուարութիւնների հանդիպեց, չնորհով մի քանի եւրոպացի թեթևսօլիկ ուսանողների, որոնք առաջարկում էին չընդունել նրանց, շատ ծիծաղելի և տխմար պատճառաբանութիւններ առաջ բերելով։ Վիճաբանութիւնից յետոյ այդ առաջարկութիւնը բացասվեց ձայների մեծամասնութեամբ։ Մենք զարմանում ենք որ այս տեսակ առաջարկութիւնը առաջ է բերում վիճաբանութիւն, մինչև իսկ արժանանում է քուէի, փոխանակ ծիծաղի և արհամարհանքի։ Է՛հ, ինչ չէ կարելի սպասել ուսանող անուն կրող այս տեսակ երիտասարդներից՝ թողնենք, անցնենք մի այլ խնդրի։

—

Մենք ասեցինք որ՝ ուսանողուհիների բազմանալը խիստ մխիթարական երևոյթ է ու միանգամայն ցանկալի և ահա ինչու.—կնոջ տգիտութիւնը, ասում է պ. Լէօն Բլէյ «Ազատ կինը» վերնագրով իր գրքում, մոր կորուստն է և մանուկի բարոյական մահը, կամ բարոյապէս մեռնելը։ Եւ իրաւ։ Ինչ է տգէտը կամ անկիրթը ընդհանրապէս,—կեանքի սարուկը, քաղաքակրթութեան ու մարդկութեան զարգացման խոչնդոտը, արգելողը և նրա անպէտք ու վնասակար անդամը։ Նա չէ առաջադիմում, նա երերվում է։ Նա մի ճահիճ է, որը ամենայն ինչ իր մէջ փտեցրել, հոտեցրել է, որի հետևանքն է և հետզհետէ լուծվելն ու չքանալը... Նա ոչ միայն ինքն է հոտում, այլ և այդ զազրալի ու գարշելի հոտը տարածում է և իր շուրջը.... Այո, տգիտութիւնը ոչնչացնող, մեռցնող է։ Նա մեռցնում է անհատին, հասարակութեան թէ բարոյապէս և թէ ֆիզիկապէս. նա մարդկութեան թշնամին է։ Ինչի նման է այն մարդը, որը չը գիտէ իր կոչումը,—անասնի. իսկ տգէտը չը գիտէ իր կոչումը, չը գիտէ իր մարդկային արժանաւորութիւնը, չը գիտէ իր բարոյական պարտքը, չէ հասկանում մարդու հոգեկան պահանջները, նրա բարոյական արժանիքն ու վսեմութիւնը։ Տգէտը գիտէ միայն՝ ուտել, խմել և քնել... ահա նրա կեանքի մի ակ պահանջը և նպատակը, նրա բարոյական փիլիսոփայութիւնը... Տգէտը գիտէ այն գիտէ անել այն, ինչ որ տեսել է, և այն, ինչ որ լսել է,—լինի վատ թէ լաւ, այդ և նոյն է, որովհետև նա անկարող է որոշել։ Զուրկ է ինքնուրոյն մտածելուց, դատելուց, քննելուց, նա ապրում է ուրիշի աշխարհում, անհատական աշխարհը չունի... «Հայրս կամ դաս այսպէս է անում, ուրեմն այսպէս է հարկաւոր, ես էլ այսպէս պիտի անեմ», այս է նրա տրամաբանութիւնը, այս է նրա աշխարհը, նրա խելքի ու մտքի հորիզոնը և սրանից աւելի առաջ նա անկարող է գնալ, այդ շրջանից կարող աւելի լաւ է ասել՝ շրջանակից նա չէ կարող դուրս գալ։ Աւելիի կամ նորի պահանջը նա չունի զգում. նա բաւականանում է նրանով, ինչ որ կայ։ Վաճառականի համար՝ արշինը և խարեբայութիւնը, վաշխառուի համար՝ խեղճին և թշուառին կեղեքելը, ծեծելը և մաշկելը, իսկ խեղճի և թշուառի համար՝ կեղեքվելը և խաբվելը և այլն.... Ո՞րից և ինչու համար են երկար ժամանակ մնում մի որ և է հասարակութեան մէջ այն զազրելի և անբարոյական հասկացողութիւնները, սովորութիւնները, և բազմազան ախտերը, ինչու հալածվում մարդկութեան վսեմ դաղափարները, նրա առաքելները, որոնք այսօր մարտիրոսներ են հանդիսանում... Ինչի հետևանքն են սրանք,—տգիտութեան, որը կաշկանդել, կուրացրել և սարսափելի դարձրել է այդ մարդկանց, որոնց անընդունակ է դարձրել մտածելու և հասկանալու որ՝ այս այսպէս չը պէտք է լինի, որովհետև սա անբարոյական վնասակար, փչացնող, մեռցնող է...

Ժընէվ. Ց. Դաւթեան

որոշում է քաղաքի մէջ, մի հասարակապատկան հողի վրայ, իր հաշուով կառուցանել և պահել մի ուսումնարան։ Բայց Մուհամմէդի հետևողները, նրանց թում և քաղաքային վարչութեան նախկին մի թուրք անդամ, ոչ թէ թոյլ չը տուին, այլ և թշնամացան յիշեալ բարեմիտ թուրքի հետ։ Ուրեմն զարմանալի չէ՞ որ այսպիսի մի հասարակութեան ներկայացուցիչների մոլեռանդութեան դէմ պատերազմելով, այժմեան վարչութիւնը քաջութեամբ և խոհեմութեամբ առաջ է տանում լուսամիտ գաղափարների իրագործումը։

Ս. Ս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Երևան, փետրվարի 26-ին։

Ամսիս 6-ին, երեքշաբթի օր, յօգուտ Բարեգործական ընկերութեան տեղիս ճիւղի, այստեղի ս. Գայիանեան օրիորդաց դպրոցի դահլիճում տրուեց «Ռուզան» պատմական ողբերգութիւնը և «Կըռթ-կըռթ» կատակերգութիւնը, որից եկամուտ եղաւ, նուէրներով հանդերձ, 316 ռուբլի 25 կ., իսկ ծախք 112 ռուբլի 12 կ., զուտ արդիւնք մնաց յօգուտ ընկերութեան 204 ռուբլի 13 կ.։

Աչքի առաջ ունենալով ընկերութեանը հասած այս օգուտը և այն հանգամանքը, որի մէջ դրված է մեր գաւառական բեմը իդեական սեռի մասնակցութեան վերաբերութեամբ և այն, որ յարգելի տիկիններ՝ Ս. Տէր-Սարգսեան, Շ. Պանճուլաղեան և օրիորդներ՝ Գ. Թաղվերանեան և Վ. Տէր-Ղուկասեան, արհամարհելով ազէտ հասարակութիւններին յատուկ բամբասանքը, սիրով մասնակցեցին յօգուտ ընկերութեան տրուած «Ռուզան» ներկայացմանը, վարչութիւնը չէ կարող անտարբեր մնալ դէպի այդպիսի անձնուրութիւնները, ուստի իր քաղցր պարտականութիւնն է համարում հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել թէ վերևում յիշված յարգելի տիկիններին և օրիորդներին և թէ միւս բոլոր սիրողներին, և յոյս ունի, որ այդ յարգելի անձնաւորութիւնները միշտ պատրաստ կը լինեն օգնելու բարի գործին։

Նախագահ վարչութեան՝ Ա. Սիմէօնեանց, քարտուղար՝ Ս. Տէր-Մարտիրոսեանց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, ուրբաթ օր, մարտի 2-ին, Թագաւոր Կայսրի գահակալութեան օրը լինելով, ամբողջ քաղաքը զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսաւորված էր։ Սիօնի մայր-եկեղեցում գոհացողական մաղթանքներ կատարվեցան, բարձրաստիճան անձանց և աղօթողների բազմութեան ներկայութեամբ։

—

Մարտի 1-ին Թիֆլիսի բոլոր եկեղեցիներում հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ Կայսր Ա-լեքսանդր Նիկոլաեվիչի յիշատակին։

—

«Մշակի» հետևեալ, երեքշաբթվայ համարը, կը տպագրվի նոր ձուլած տառերով։

—

Այս օրերս ուղարկեցինք Վիէննա, տիկին Մանիի անունով, ԲԱԳՈՒԻՑ մեր խմբագրութեան մէջ քանի մի օր առաջ ստացված 77 ռուբլի։

—

Անցեալ 1889 թուին հրատարակվեց ռուսերէն լեզուով «Методика ручнаго труда» վերնագրով գիրքը, որ Վ. Ֆարմակովսկի կազմել է չվէդացի յայտնի մանկավարժ Սալոմոնի մեթոդով։ Գրքի մէջ խօսվում է արական ուսումնարանների մէջ ձեռագործ աշխատանքների գործադրութեան մասին։ Խորհուրդ ենք տալիս հայ մանկավարժներին ուսումնասիրել այդ գիրքը, որը արժէ 75 կոպէկ։ Թիֆլիսում գիրքը ծախվում է Խիղդէկելի գրավաճառանոցում։ Մենք կաշխատենք խօսել այդ գրքի մասին մեր լրագրի էջերում։

—

Փետրվարի 28-ին կայացաւ ԹԻՖԼԻՍԻ արհեստաւորների գլխաւորի ընտրութիւնը։ Ընտրութիւնների ժամանակ առաջարկվեցան չորս կանդիդատներ, նախկին գլխաւոր Նաումէնկո, ապա Սերովբեանց, Ղօնիել և Կովալով։ Ընտրվեց ձայների մեծամասնութեամբ, այն է 126 ձայներով ընդդէմ 53 ձայների, արհեստաւորների գլխաւորի պաշտօնի համար դարձեալ Նաումէնկո, իսկ Սերովբեանց ընտրվեց կանդիդատ, ստանալով 113 սպիտակ քուէ և 66 սև քուէ։

—

Կիրակի, 25-ին փետրվարի բացվեց Բաթումում Թիֆլիսի Առևտրական բանկի բաժինը։ Բացումը հանդիսաւոր էր. ռուսաց և հայոց հոգևորականութեան կատարած մաղթանքների ժամանակ ներկայ էին՝ տեղական իշխանութեան ներկայացուցիչները և Բաթումի վաճառականութիւնը։

—

ԹԻՖԼԻՍԻ պարսից ընդհանուր հիւպատոս Միրզա-Ռիզա-խան տպագրել է «Кавказъ» լրագրում մի նամակ, որով հաղորդում է թէ Պարսկաստանի ոչ մի տեղում այս րոպէիս խոլերա չը կայ։ Ոչ Ադրբէյջանում, ոչ Գիլանում չը կայ խոլերայի նշոյլն անդամ, ասում է հիւպատոսը, և աւելացնում է որ չը կան էլ որ և է ուրիշ վարակիչ հիւանդութիւններ։ Հիւպատոսը հաղորդում է, ի միջի այլոց, որ Պարսկաստան ուղարկած բժշկապետ Բաբայեան այժմ համոզվել է այդ ճշմարտութեան մէջ։ Թէհրանից Բաբայեան ուղևորվել է Քիրմանշահ և Համադան, որոնք գտնվում են թիւրքաց սահմանի վրա, որտեղ անցեալ աշնան խոլէրա կար, բայց որն անհետացաւ խիստ ձմեռվայ հասնելուն պէս։

—

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութիւնը հրատարակեց հետևեալ տակտ կենսական մթերքների վրա, մարտի 1-ից մինչև ապրիլի 1-ը։ Թխած հացը, կրուպչատկա ալիւրից, արժէ ֆունտը 5 կոպ., ցորենի ալիւրից, առաջին տեսակի՝ $3^1/_2$ կ., երկրորդ՝ 3 կ., տեղական թոնրի մէջ նոյն ալիւրից թխած հացի ֆունտը արժէ՝ առաջին տեսակի 5 կ., երկրորդ 4 կ., և երրորդ $3^1/_2$ կ.։ Կրուպչատկա ալիւրից խառն ցորենի ալիւրի հետ թխած լաւաշները արժեն՝ առաջին տեսակը 5 կ. ֆունտը, երկրորդ տեսակը՝ 4 կոպէկ։ Տաւարի մսի ֆունտը, առաջին տեսակի արժէ 9 կ., երկրորդ 8 կ., սուկի 16 կ., ոչխարի մսի ֆունտը 10 կոպէկ։

—

Մարտի 1-ին, հինգշաբթի օր, աւստրիացի յայտնի ջութակ-ածող Ֆրանց Օնդրժիչէկ տուեց Թիֆլիսի թատրոնում իր երկրորդ կոնցերտը, մասնակցութեամբ երգչուհի տիկին Օնդրժիչէկի։ Որպէս վիրտուոզ ջութակ-ածող Օնդրժիչէկ կարող է առաջնակարգ ածողներից մէկը համարվել. նրա տեխնիկան աննման է։ Օնդրժիչէկ դեռ երիտասարդ մարդ է, բայց արդէն այժմ նա իրաւամբ կարող է Պագանինիի, Սիվօրիի, Սարազատէի, Կոնսկու և Վիէնիավսկու յաջորդ համարվել. նրա մատների տակ ջութակը հրաշքներ է գործում՝ երգում, խօսում, բարկանում, հառաչում է։ Լաւ էին կատարված, մանաւանդ, Մէնդէլսոնի «Concert», Վիէնիավսկու «Legenda» ու «Mazurka» և Պագանինիի «Danse des sorcières» պիէսաները։ Թատրոնը թէև լի չէր, բայց կոնցերտին ներկայ գտնվածները ոգևորված ցոյցեր արեցին երաժշտին։ Օնդրժիչէկ ստացաւ մի ընծայ՝ արծաթեայ քնարը, որը, ինչպէս լսել ենք, մատուցին նրան իր հայրենակիցները, Թիֆլիսում բնակվող չէխերը։ Տիկին Օնդրժիչէկ, որը թէև մի փոքրիկ, բայց բաւական դուրեկան ձայն ունի, նմանապէս ստացաւ մի ընծայ,—մի ալբոմ։

—

Մարտի 1-ին Թիֆլիսի պոլիցէյմէյստէր Բօսինակի թողնելով իր պաշտօնը, որ նա վարեց շատ տարիներ, հեռացաւ Թիֆլիսից և ուղևորվեց դէպի Ռուսաստան։ Բօսինակուն ճանապարհ էին գցում նրա բոլոր ծառայակիցները և բազմաթիւ բարեկամներն ու ծանօթները։

—

Մարտի 1-ին կայացաւ Թիֆլիսի քաղաքային կրէդիտական ընկերութեան վերադիտող մասնաժողովի նիստը, բժշկապետ Բօսինեանցի նախագահութեամբ։ Այդ նիստում որոշված է. վերջնականապէս հեռացնել իշխան Կոնստանտին Բէհբութեանին մասնաժողովի և ընկերութեան անդամութիւնից, քանի որ իշխանը զուրկ է ընկերութեան կանոնադրութեամբ պահանջվող ցէնզից։

—

Վաղը, կիրակի, մարտի 4-ին, երեկոյեան 8 ժամին, Թիֆլիսի Գրիբոյեդովսկայայա փողոցում գտնվող (տուն № 6) երաժշտական շրջանում մի քանի սիրողներ եւրոպական հռչակաւոր երաժշտութեան կոնցերտ են տալիս յօգուտ Ծինամաղվարովի երկրագործական այրված դպրոցի։ Մասնակցում են՝ օրիորդ Ամիրովա, տ.տ. Պոդոբէդ, Ըչէուլովա, Զակելի, և պ.պ. Ամֆի, Իվանով և Պրօգուլբիցկի։ Երգեհոնի վրա կը դաշնակցի պ. Սարաջեվ, իսկ պիանոի վրա պ. Վէտոշնիկով։ Տոմսակների գները՝ 2 ռուբլի, 1 ռ. 50 կ., 1 ռուբլի և 50 կոպէկ։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Կարդալով «Մշակի» № 17-ի մէջ, ներքին լուրերի բաժնում, Ագուլիսի հասարակութեան յայտարարութեան առիթով գրված նկատողութիւնը, կուզէի ես էլ սրտի ցաւով յայտնել, որ Վաղարշապատի բնակիչները ունենալով երեք բժիշկ և մի դեղատուն, չեն կարողանում օգտվել նրանցով, իրանց սնոտիապաշտութեանը դերի լինելու պատճառով։ Փող հաւաքեցին իրանց մէջ, մատաղ արեցին Աստուծուն, որ զանազան տարափոխիկ հիւանդութիւնները վերջանան, որոնք առաջացել են հազար ու մի տեսակ կեղտոտութիւններից, բայց կարծես թէ Աստուած նրանց ձայնը չը լսեց»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Հաստատ աղբիւրից լսեցինք, որ օր. Ս. Պետրոսեան մտադիր է ներկայ տարվանից հիմնել Բագուի մէջ մի մանկական պարտէզ հայ մանուկների համար։ Ցանկալի է, որ օրիորդը շուտով իրագործէը իր ինքն ըստ ինքեան համակրելի մտադրութիւնը, որով մեծ ծառայութիւն մատուցած կը լինի Բագուի մի յայտնի դասակարգի մանուկներին»։

—

Մեզ գրում են ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ, որ ամսիս 25-ին, կիրակի օրը, ս. պատարագից յետոյ, Վաղարշապատի օրիորդաց դպրոցի դահլիճում, բժիշկ Մ. Զարգարեանց կարդաց մի դասախօսութիւն առողջապահութեան մասին։ Ի նկատի ունենալով հարևան երկրներում երևեցած խոլերան, պ. դասախօսը—ասում է մեր թղթակիցը—գիտնական փաստերով և բազմափորձ օրինակներով ապացուցեց, որ բժշկութիւնը խոլերայի դէմ անզօր է դիմադրել, մնում է ուրեմն, որ ժողովուրդն ինքն իր մաքրասիրութեամբ և առողջապահական պայմանները գործադրելով, ոչնչացնէ այդ ախտի զօրութիւնը։ Պ. բժիշկը առողջապահական պայմաններով ապրելուն վերագրեց այն հանգամանքը, որ Պարիզը 1853 թուին խոլերային զոհեց $1^1/_2$ միլիոն մարդ, 1863 թուին—80 հազար, 1872-ին քանի մի հազար, իսկ վերջին անգամ, 1884 թուին միմիայն 5 մարդ։ Հետևաբար, ասեց պ. բժիշկը, մեզ մնում է աշխատել կարողութեան չափ հոգալ օդի, տների և կեանքի մաքրութեան մասին, և որ գլխաւորն է՝ ուշադրութիւն դարձնել սանիտարական հսկողութեան վրա։ Դասախօսութիւնը ձրի էր և պէտք է շարունակվի ամեն կիրակի։ Ցանկալի էր, որ միւս դաւառական բժիշկներն էլ հետևէին պ. Զարգարեանի գեղեցիկ օրինակին։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ հաղորդում են. «Մի քանի չարագործ թուրքերին, անցեալ տարվայ արտաքոյ կարգի որոշմամբ Սիբիր աքսորելուց յետոյ, այժմ սպանութիւնները Բագուում նկատելի կերպով պակասել են, այնպէս որ այս ձմեռվայ ընթացքում, սովորականին համեմատ, սպանութիւններ չեղան։ Անկասկած, եթէ ամեն տեղ էլ հոգ տանեն ոչնչացնել պարագլուխ կանգնած չարագործներին, կը հանգստանայ ժողովուրդը այդպիսիների ձեռքով պատճառած աղէտներից»։

—

ՄՕԶԴՕԿԻՑ մեզ գրում են հետևեալը. «Փետրվարի 8-ին, տեղիս երկսեռ ուսումնարանները կատարեցին Վարդանանց տօնը։ Հանդէսը բացվեց «Տէր պահեա զկայսրն» մաղթանքով, որից յետոյ սկսվեցան ճառախօսութիւնները։ Միջանցքներում բաւական անհերդաշնակ կերպով երգում էին երգեցիկ խմբերը։ Ցանկալի էր, որ ուսումնարանի վարչութիւնը ուշադրութիւն դարձնէր կանոնաւոր երգեցողութեան վրա և գործին հմուտ ուսուցիչ հրաւիրէր։ Ուսումնարանի վարչութիւնը օր առաջ չէր հրաւիրել ժողովրդականներին ներկայ լինելու հանդէսին, և այդ էր պատճառը, որ շատերը զրկվեցան հանդիսին ներկայ լինելու ուրախութիւնից»։

—

ԹԷՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱՑԻՑ մեզ գրում են. «Շաբաթ, փետրվարի 10-ին, տեղիս հայ սիրողների խումբը, բարեգործական նպատակով, տուեց մի հայկական ներկայացում «Վարդան Մամիկոնեան» կամ «Վարդանանց պատերազմ» ողբերգութիւնը։ Ներկայացումը բաւական աջող անցաւ։ Թատրոնը լի էր հանդիսականներով, որոնց թում կային և այլազգիներ։ Պէտք է ասել, որ այդ ուրախալի երևոյթը Շուրայում շատ հազուագիւտ է. շատ տակաւ է պատահում Շուրայում հայկական ներկայացում տեսնել և եթէ երբեմն մի քանի երիտասարդների մէջ յարուցվում էր ներկայացում տալու հարցը, ամեն կողմից յուսահատական խօսքեր էին, որ թափվում էին խեղճերի գլխին։ Սակայն այս անգամ երիտասարդ սիրողները այնչափ եռանդով սկսեցին գործել, որ ուշադրութիւն չը դարձնելով յուսահատական խօսքերին, գործը գլուխ բերին։ Եւ այդպիսով փորձը յոյց տուեց, որ այսպիսի հասարակութեան մէջ էլ կարելի է գործել, միայն թէ եռանդով, սիրով ու համերաշխութեամբ սկսեն գործը։ Ներկայացումից զուտ օգուտ մնաց միայն 38 ռուբլի, իսկ մուտքն էր 106 ռուբլի։ Սիրողները 38 ռուբլին բաժանեցին հինգ աղքատ հայ ընտանիքների մէջ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Պարիզից գրում են, որ չը նայած պատգամաւորների ժողովում տարած յաղթութեան, այնու ամենայնիւ սպասում են, որ մինիստրական փոփոխութիւն կը լինի։ Ֆրանսիական այժմեան մինիստրութիւնը՝ համեմատելով մի քանի նախորդ մինիստրութիւնների հետ՝ երկար գոյութիւն ունեցաւ, և այդ գուցէ դուր չէ գալիս ֆրանսիական փոփոխամիտ պատգամաւորներին։

—Բերլինից գրում են, որ գերմանական կառավարութեան մշակած ծրագիրը, բանւորական հարցի վերաբերմամբ, շատ կէտերում անհամեմատ թոյլ և անորոշ է, քան այն ծրագիրը, որ կազմել էր չվէյցարական կառավարութիւնը։ Վիլհելմ կայսրը այս օրերս խօսելով բանւորական հարցի մասին, խիստ կերպով յարձակվել է սոցիալիստական կուսակցութեան գործունէութեան վրա։

—Գերմանական ըէյխստագին պէտք է ներկայացվի մի օրինագիծ, ոչ թէ սոցիալիստների, այլ անարխիստների դէմ։

—Պարիզում Բուլանժեականները մի նոր բաղ արձակեցին. նրանք հրատարակեցին, որ իբրև թէ Կարնօ մտադիր է հրաժարական տալ։

—Էլի մի նոր կոնգրէս, այս անգամ Բուխարէստում. այս ամառը պէտք է գումարվի այդ քաղաքում էթնոգրաֆների կոնգրէս։

—Ֆրանսիական միապետականները և արկածախնդիր բուլանժեականները սկսել են ազմուկ բարձրացնել հանրապետական կառավարութեան դէմ, որը սկզբունքով արդէն համաձայնութիւն է տուել մասնակցելու Բերլինի բանւորական կոնգրէսին։ Այդ կուսակցութիւնների օրգանները, ինչպէս միշտ, այժմ էլ անմտաբար գոչում են. «Ֆրանսիացիք, զգուշացէք, մինիստրները ուզում են բարեկամանալ մեզ ատելի իշխան Բիսմարկի հետ» և այլ այսպիսի անմտութիւններ։

—Մէչխէդից «Нов. Время» լրագրին գրում են։ Վերջին ժամանակներս սկսեցին բաւական յաճախ կրկնվել հայերի մահմետականութիւնն ընդունելու դէպքերը։ Մահմետականութիւն ընդունող վերջին հայը՝ Եվիսաւետպոլի Նահանգի Զայքենդ գիւղի բնակիչ Ցարութիւն Մ-ն էր։ Դրա մահմետականութիւնն ընդունելը շատ հանդիսաւոր կերպով կատարվեց։ Մահմետական հոգևորականութիւնը այդ առիթով մի չքեղ ծիսակատարութիւն կազմեց Մէչխէդի գլխաւոր մեծ մզկիթում, ուր գտնվում է Իմամ-Բիզայի գերեզմանը։ Ապա հային տարան Խորասանի Նահանգի կառավարիչ պրինց Բուխն-Ուդդուլէի մօտ, որը երկար խօսակցեց նրա հետ, ընծայեց նրան զանազան հագուստներ և ձի։ Հոգևորականութիւնը առժամանակ թոյլատրեց նրան բնակվել Իմամ-Բիզայի մզկիթի մօտ, նշանակեց նրան ամսական երեք թուման (9 ռ.) ռոճիկ և «առիւծի ու արեգակի» պատկերով մի նշան տուեց նրան, գոտկի վրա կպցնելու համար։ Մի ուրիշ հայ, որը անցեալ տարի է ընդունել մահմետականութիւնը, արդէն պակվել է, իսկ մնացածները բնակվում են մեծ մասամբ մզկիթների մօտ, զուրանը կատարելապէս ուսումնասիրելու նպատակով։ Դրանք բոլորն էլ ռուսահպատակներ են։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի քանի տարի սրանից առաջ մի գերմանական լրագրի էջերում շարունակ տպվում էր մի վէպ։ Վէպը դրանով վերջացաւ, որ ամուսնացած

ղոյգի մէջ ծագեցան դժգոհութիւններ, մարդ ու կինը սկսեցին ապահարզան պահանջել և վերջապէս իրարից բաժանվեցան։ Վէպի այդ տեսակ վերջաւորութիւնը գայթակղեցրեց լրագրի բաժանորդներից շատերի բարոյական զգացմունքը. մանաւանդ գեղեցիկ սեռը սկսեց սաստիկ բողոքել վէպի այդ տեսակ վերջաւորութեան դէմ։ Խմբագրութիւնը տեսնելով թէ բաժանորդների կողմից բողոքներն ու յանդիմանութիւնները չեն վերջանում, ճարահատված մի գեղեցիկ օր հրատարակում է իր թերթը հետևեալ ուրախալի լուրը իր բաժանորդներին հաղորդելով. «Հաստատ աղբիւրից տեղեկացանք, որ մեր լրագրում տպված բոմանի հերոսները՝ պարոնն ու տիկինը, որոնք իրարից բաժանված էին, այժմ նորից հաշտվեցան իրար հետ, և նորից բաղդաւոր կերպով ապրում են միասին։»

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 փետրվարի։ Պետերբուրգի դումայն նախագծում է կէս կոպէկանոց տուրք վերցնել նաւահանգիստները հասնող նաւերից, Օդէսայի և ուրիշ նաւահանգիստների նման։

ԲԵԼԳՐԱԴ, 28 փետրվարի։ Այսօր այստեղ հասաւ իտալական թագաժառանգը։

ԲԵՐԼԻՆ, 28 փետրվարի։ Շատ հաւանական է, որ սեպտեմբերի ընտրութիւններին Ստամբուլով զրկվի իր պաշտօնից, և այդ պատճառով Կօբուրգեան պրինցի դրութիւնն էլ կը դժուարանայ։

ԶԱՆԶԻԲԱՐ, 28 փետրվարի։ Նոր յարձակումների ժամանակ, մայօր Վիսման ջարդեց Բանագիրի վերջին միացեալ ոյժերը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 մարտի։ Անդրկասպեան երկաթուղու կառավարիչ գեներալ Աննենկովի Պետերբուրգում լինելու արձակուրդի ժամանակամիջոցը աւելացրած է 3 ամսով։—«Новое Время» լսել է որ հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը, նաւագնացութիւնը սկսելուն պէս, կայցելի գլխաւոր ջրային ճանապարհները։—«Новости» լրագիրը հաղորդում է, որ հիւսիսա-հարաւարևմտեան նահանգներում զիւղական գործերի վերաբերեալ նահանգական ատեանների անդամների թիւը պակասացնելու խնդիրը վճռված է բացասական կերպով։ Այդ միջոցները վաղաժամանակեայ են համարված։

ԲԵՐԼԻՆ, 1 մարտի։ «Hamburger Nachrichten» լրագիրը հաղորդում է, որ կայսրի և պետական կանցլերի խորհրդակցութեան նիւթը ոչ թէ վերջինի պաշտօնների բաժանելն էր, այլ կառավարութեան յարաբերութիւնը դէպի նոր ռէյխստագը, և նիւթերի բաժանումը գարնանային և աշնանային նստաշրջանների մէջ, այլ և կոնֆէրէնցիայի ընդունելութիւնը և նրա աշխատանքների ղեկավարութիւնը։ Սոցիալիստների վերաբերեալ օրէնքների մասին առ այժմ ոչինչ չէ յայտնի։ Այդ հարցը յետաձգված է մինչև ռէյխստագի ընաւորութեան որոշելը։ Ռէյխստագը կը գումարվի ապրիլի 15-ին։

ԼՕՆԴՕՆ, 1 մարտի։ Անգլիական բանկը իջեցրեց դիսկօնտը $4^1/_2$%-ից մինչև 4%։

ԲՈՒԴԱ-ՊԵՇՏ, 1 մարտի։ Երէկ կէսօրից յետոյ Տիսայի մինիստրութիւնը պաշտօնապէս հրաժարական տուեց. կայսրը ընդունեց հրաժարականը։

ԱՍՏՐԱԽԱՆ, 1 մարտի։ Քաղաքի մօտ Վոլգան բացվեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 մարտի։ Երկրորդ ներքին փոխառութեան կատարված տիրաժի ժամանակ հետեւեալ տոմսերը տարան գլխաւոր գումարները։

№ սերիայի	№ տոմսի	Գումարը	№ սերիայի	№ տոմսի	Գումարը
10,260	41	200,000	3,139	40	1,000,000 մանր.
19,135	34	75,000	2,582	12	
5,983	27	40,000	12,740	18	
4,927	7	25,000	10,775	35	
11,125	6	10,000	2,454	38	
4,951	26	10,000	14,678	39	
10,718	40	10,000	8,747	26	
10,088	22	5,000 մանր.	19,435	32	
10,006	13		9,277	32	
18,224	34		18,831	36	
6,751	27		13,648	47	
10,903	40		16,287	42	
5,793	12		15,152	25	
8,752	5		15,963	12	
14,535	12		5,307	35	
5,527	44		7,222	35	
4,261	46		4,445	48	
2,706	20		2,803	27	
7,783	3		13,708	37	
15,683	38		8,794	49	

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մարտի 1-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ—	91 ք.	25	»
Բերլինի վրա 100 մարկ —	44 »	55	»
Փարիզի վրա 100 ֆրանկ —	36 »	20	»
Ոսկի — արժէ —	7 »	31	»
Մաքսային կուպոններ —	145 »	75	»
Արծաթ — — —	1 »	8	»
Բորսային դիսկոնտներ —	$5^1/_2$ և	7%	»
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի	99 »	87	»
— — — — 2-րդ —	100 »	—	»
— — — — 3-րդ —	100 »	—	»
— — — — 4-րդ —	99 »	87	»
— — — — 5-րդ —	100 »	12	»
— — — — 6-րդ —	99 »	87	»
6% ոսկեայ րէնտա.	163 »	—	»
4% ոսկեայ փոխառութիւն.	138 »	—	»
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	100 »	62	»
— — 2-րդ —	100 »	62	»
— — 3-րդ —	100 »	37	»
Ներքին 5% առաջին փոխառութ.	238 »	—	»
— երկրորդ —	225 »	—	»
— երրորդ աղն. կալ. բ.	218 »	50	»
Պետ. երկաթուղային րէնտա	100 »	25	»
$5^1/_2$% րէնտա	103 »	25	»
4% ներքին փոխառ.	86 »	37	»
5% գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի.	100 »	12	»
4% վկայակ. գիւղ. հող. բանկի.	103 »	37	»
$4^1/_2$% գրաւական թղթեր կալուած.			
փոխ. կրեդ. ընկ. մետալ.	143 »	25	»
— — թղթադ.	94 »	87	»
Պետերբուրգի քաղաքային կրեդ.			
ընկ. օբլիգացիաներ	96 »	12	»
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	95 »	37	»
Ոդէսայի — —	95 »	50	»
Թիֆլիսի — —	87 »	50	»
Դրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի	99 »	—	»
— — Քութայիսի — —	98	50	

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ խոնարհաբար խընդրում է ընկերութեան անդամներին շնորհ բերել կիրակի, մարտի 4-ին առաւօտեան 11 ժամին ս. Նշան եկեղեցու ուսումնարանը, ներկայ գտնվելու ընդհանուր ժողովին, ընկերութեան նախահաշիւը քննելու և հաստատելու և վարչութեան չորս անդամ և եօթը փոխ-անդամ ընտրելու համար։ 2—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ։

Չորեքշաբթի, մարտի 14-ին, ԱՆԱՏՕԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻԳ (GARRIGUES) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում տան, Նարբէրէժնայում, և Թիֆլիսում Նախկին Արծրունի գալլերէում, № 114. 1—2

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՑՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ պատիւ ունի ծանուցանելու ի գիտութիւն ընկերութեան յարգելի անդամներին, թէ կիրակի, մարտի 4-ին, առաւօտեան 11 ժամին, Թիֆլիսի քաղաքային խորհրդի դահլիճում նշանակված է ընկերութեան ընդհանուր ժողովը, քանի որ փետրվարի 25-ին իր ունեցած նիստում ընկերութիւնը չը կարողացաւ աւարտել իր պարապմունքները։

LE CAUCASE ILLUSTRÉ
RÉDACTEUR EN CHEF: J. MOURIER
IMPRIMERIE MARTIROSSIANTZ—TIFLIS
Prix de l'abonnement: Tiflis, un an: 10 roubles; Russie et Caucase: 12 r.; Union Postale: 14 r.

ՄԻԶՈՑ ԽԱՐԲՈՒԽԻ ԴԷՄ
բժշկական դէպարտամէնտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ
անուանով
Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ
Ծախվում է 40 կոպէկով
Դեղագործական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլիսում։ 1—52 (Շ.)

Մ. Գ. ՑԷՅՏԼԻՆԻ
ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆԻ
ՕՊՏԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Պալատի այգու դիմաց, անկիւնի մագազինում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոր-ոսկեայ, նիկելեայ, պողպատեայ և կրիայի ոսկորից ԱԿՆՈՑՆԵՐ, ՊԷՆՍՆԷՆԵՐ և ԼՕՐՆԷՏՆԵՐ։ Թատրօնական և դաշտային ԲԻՆՕԿԼՆԵՐ, ՋԵՐՄԱՋԱՓԵՐ, թէ սենեակների, թէ դուրսը կախելու և թէ վանների համար։ Վերաստուգված և վկայական ունեցող ՄԱԿՍԻՄԱԼ ջերմաչափեր։ Լօրնէտի և պէնսնէի համար ոսկեայ, արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մետալական թելեր։



Ակնոցներ և պէնսնէներ տրվում են նմանապէս բժշկների պատուէրով։

Մագազինում յանձն են առնում նմանապէս փչացած իրերի նորոգելը և ապագիների դնելը։

ԳՆԵՐԸ ամենաչափաւոր են։ 6—50 (շ)

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՄ համարում հրապարակաւ յայտնել ի գիտութիւն մեր ԿՈՎԿԱՍԻ պատուելի ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ, որ ես վերջին ժամանակներս ՄՕՍԿՎԱՑԻՑ տեղափոխվել եմ ՎԱՐՇԱՎԱ, և դարձեալ ընդունում եմ ամեն տեսակ յանձնարարութիւններ, մասնաւորապէս ԿԱՇՈՒԻԳՈՐԾ լինելով, առնում եմ և ուղարկում եմ մեր յարգելի վաճառականներին, ամեն տեսակ ԿԱՇՈՒԵՂԷՆ և դրա վերաբերեալ ապրանքներ։ Ծանօթ եմ նոյնպէս գայանտէրիական և ուրիշ ապրանքների հետ։ Իմ հասցէն. ВАРШАВА, Товмасу ЯРГУЛЯНЦЪ. Переѣздъ, домъ № 3. 16—20 (Ե. շ.)

ԹՂԹԻ ՊԱՀԵՍՏ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԴԻՏԻԱՏԿՕՎՍԿՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ունի փոստի, գրելու, գրքերի, լրագիրների, ծխախոտի գոյնաւոր, կազմի և ուրիշ տեսակ թղթեր. ծախվում են գործարանի գնով. կան նոյնպէս և մեծ քանակութեամբ գրելու պարագաներ։

ԹԻՖԼԻՍ. Դվօրցովայա փողոց. Ազնուական կալուածական բանկի շինութեան մէջ։ 14—20

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գէորգ Մէնդէլի կաֆէն, որը գտնվում է ՎԻԵՆՆԱՅՈՒՄ, Ռօթէնթուրմշտրասէ փողոցում, Վիեննայաբնակ հայերի համար կենտրօնատեղի է կազմում։ Ստացվում են հայ լրագիրներ, ի միջի այլոց և „Մշակ“ լրագիրը։

CAFÉ MAENDEL
Rothenthurmstrasse
WIEN

2—3 (Շ)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՕՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ։

Ուրբաթ, 9/21 մարտի դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ „EBRE“ (ԷԲՐ) շոգենաւը, նաւապետ FRAGER (ՖՐԱԺԷ), դէպի Կ. Պոլիս, Մարսէլ, Հավր և Լօնդօն, մտնելով և միջանկեալ նաւահանգստները։

Ագէնտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ, իսկ ԲԱԳՈՒԻ մէջ ԳՕԼԴԼՈՒՍ։ 2—2

Дозволено цензурою, Тифлисъ 2 Марта 1890 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.